ՀԱՂԱՐԴԻՈՒՄՆԵՐ

ԼԵՎՈՆ ՍԱՐԳԱՎԱԳ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՋԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ. ՇԱՐԺԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Մեծ է ԺԲ-ԺԳ. դարերում գործած եւ հայ ժողովրդի պատմության մեջ փառավոր դիրք ունեցող Զաքարյան իշխանական ընտանիքի քաղաքական, մշակութային, եկեղեցաշեն ու եկեղեցանպաստ գործունեությունը: Զաքարյանները պատմության ասպարեզ իջան այն ժամանակ, երբ սելջուկյան տերությունը մասնատվել, քայքայվել ու անկում էր ապրում, իսկ մյուս կողմից հզորացման գագաթնակետին էր հասել հարեւան Վրաց թագավորությունը: Վրաստանի հզորացումը ոգեւորում էր հայերին ու շուտափույթ ազատագրական հույսեր ներշնչում: Այսպիսի իրադրության մեջ Զաքարյան իշխանական ընտանիքը, կարողանալով ճիշտ գնահատել ժամանակի քաղաքական իրավիճակը, հայ-վրացական դաշնակցության միջոցով՝ գլխավորեց ազատագրական այդ պայքարը: Զաքարյաններին հաջողվեց շատ կարճ ժամանակահատվածում դառնալ վրացական պետության հզոր իշխանական տներից մեկը: Նրանց անմիջական օգնությամբ Վրաստանն իր գերիշխանությունը տարածեց մինչեւ Դարսկաստանի հյուսիսային նահանգներն ու Մեծ Հայքի հարավային շրջանները: Մյուս կողմից ազատագրված հայկական տարածքներում վերականգնվեցին ինքնուրույնությունը, տնտեսական ու հոգեւոր կյանքը: Զաքարյանների օրոք կառուցվեցին եւ նորոգվեցին բազմաթիվ ամրոցներ, վանքեր ու եկեղեցիներ: Հայկական մի շարք շրջաններ, որ գտնվում էին ամիրությունների տիրապետության տակ՝ մեկը մյուսի երեւից ազատագրվեցին եւ առանձին իշխանություններ կազմեցին, որոնք գտնվում էին Զաքարեի եւ Իվանեի անմիջական իշխանության ներքո: Այսպիսով, վրաց-հայկական զինակցության եւ ռազմական գործողությունների արդյունքում ազատագրվեցին պատմական Հայաստանի հյուսիսային, արեւելյան, մասամբ եւ կենտրոնական նահանգները՝ Շիրակը, Արարատյան դաշտավայրը, Գուգարքը, Ուտիքը, Սյունիքը եւ Արցախը: Զաքարյան Երկայնաբազուկները վրաց Բագրատունիներից ստացան Հայաստանի ազատագրված նահանգները՝ մի մասը որպես սեփականություն, մյուս մասը՝ ի տիրապետություն:

ԺԲ-ԺԳ. դարերում ավելի քան մեկ դար տեւած հայ-վրացական քաղաքական եւ ռազմական համագործակցության ընթացքում բնական է, որ տեղի ունենային նաեւ եկեղեցական շփումներ եւ, ըստ այդմ էլ, առաջ գային տարաձայնություններ զանազան ծիսադավանական հարցերի շուրջ: Աշխարհիկ իշխանությանը զուգընթաց աճում էր նաեւ Վրաց Եկեղեցու ազդեցությունը: Որպես հաղթող ու Հայաստանն ազատագրող ուժ՝ վրաց կողմը, բնականաբար, գերապատվություն էր վերապահում իրեն նաեւ կրոնաեկեղեցական հար-

ցերում: Հայտնի է, որ սելջուկյան լծի ծանր պայմաններում բյուզանդացիներն սկսեցին լքել հայկական սահմանները, եւ նրանց եպիսկոպոսական թափուր մնացած աթոռները կամաց-կամաց անցան Վրաց Եկեղեցու ենթակայության տակ[1]: Հայ-վրացական եկեղեցադավանական հակամարտությունն զգալի չափերով սնուցվում էր նախորդ եւ այս շրջաններում Հայ Եկեղեցու դեմ բյուզանդական միջավայրում ստեղծված մի շարք երկերով: Շուտով նմանատիպ երկերով է սկսում հանդես գալ նաեւ Վրաց Եկեղեցին: Դրանցից, Զաքարյանների օրոք, հայտնի էր Արսեն Իշալթոյացու (Վաղոսձե) «Դոգմատիկոնը», որին ի պատասխան Մխիթար Գոշը գրում է «Թուղթ առ Վրացիս» ջատագովությունը:

Տիրում էր կրոնական անհանդուրժողականություն. «Եւ այս աղտ ամբաստանութեան է, զի Յոյնն զինքն կարծէ ճշմարիտ, եւ Հռոմն՝ զինքն, նմանապէս եւ ազգ ամենայն, առ որ ասելի է. Արդ՝ եղիցի Աստուած ճշմարիտ, եւ ամենայն մարդ՝ սուտ: Թէ այնպիսի ունէաք կամք, որ զբարին յամենայն ազգաց ժողովէաք եւ զխտրանն ի բաց ընկենուաք, Աստուած գործակից լինէր եւ ի բարին ուղղէր կարգ եկեղեցւոյ. զի չիք ազգ, որ բարի կարգ ոչ ունի եւ խտրան»[2]:

Հայ-վրաց եկեղեցական հարաբերություններն ավելի սրվեցին 1197 թվականի Ծռազատկի պատճառով: Չանսալով Վրաց Եկեղեցու հարկադրանքներին՝ հայերը Զատիկը տոնեցին նրանցից մեկ շաբաթ հետո, որի արդյունքում «սկսան վիճել եւ կազել ընդ միմեանս, եւ ի սաստկանալ կռոյն՝ յարձակեցան վիրք ի մին յեկեղեցեացն հայոց (թերեւս ի Տփխիս քաղաքի), եւ հրձիգ արարին զայն. յորում այրեցան ոգիք քառասուն»[3]: Հայերն իրենց հերթին հակահարձակ եղան, եւ «չեղեւ նոցա այլազգ խաղաղել զհայս, բայց եթէ վճարելով հարիւր հազար դահեկան վասն շինութեան եկեղեցւոյն, եւ այլ եւս քառասուն հազար դահեկան վասն քառասունից՝ որք այրեցան յեկեղեցւոջ անդ»[4]:

Հայ-վրաց այս եւ նման խնդիրների ժամանակ էր, որ առաջ եկավ Զաքարյան իշխանների դավանական պատկանելության հարցը, որի արդյունքում Իվանեն վրացադավանություն ընդունեց, իսկ Զաքարեն հավատարիմ մնաց Հայ Եկեղեցուն: Զաքարյան եղբայրների եկեղեցական դիրքորոշումը հայ պատմագիրները հետեւյալ կերպ են բնութագրում. «Բայց Իւանէ խաբեալ ի թագուհւոյն Թամարայ՝ տկարացաւ ի հաւատոյն...իսկ Զաքարէ՝ աւագ եղբայրն. մնաց յաւագ եւ ի սեպհական հաւատն»[5], «Իւանէ խոտորեցաւ յաղանդն Քաղկեդոնի, յոր կոչծանեալ էին վիրք, զի սիրեաց նա ի թագուհւոյն՝ որ Թամար կոչէր, ի դստերէն Գիորգեայ, իսկ Զաքարէ յուղղափառութեանն եկաց, զոր դաւանեն հայք»[6]:

---

1 Քաղկեդոնականությունն ըստ Ն. Մառի, արդեն Ժ. դարում բավականին արմատներ էր գցել հայ եկեղեցական իրականության մեջ այն աստիճան, որ հակաքաղկեդոնական մասը, մի պահ, կարծես փոքրամասնություն էր կազմում: Ըստ նրա դեռ Թ. դարասկզբին «հայ քաղկեդոնականների դրությունը Հայաստանում այնքան ամուր էր, որ նրանք ձգտում էին երկրում հասնել գերիշխանության: Հյուսիսարեւմտյան Հայաստանը Կղարջք եւ Տայք մարզերով՝ այդ ժամանակ արդեն նրանց ձեռքում էր: Արտանուջի Բագրատունիները՝ երկրամասի տիրակալ իշխանները, արդեն քաղկեդոնականներ էին, եւ դա շատ էր օգնում այս ծայրամասում քաղկեդոնականների հաղթանակին» (**Н. Я. Марр**, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995, стр. 214):

2 **Մխիթար Գոշ**, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ. տե՛ս «Գանձասար», հատ. Զ, Երեւան, 1996, էջ 352 (այսուհետեւ՝ **Մխիթար Գոշ**):

3 **Մ. Չամչյանց**, Հայոց Պատմություն, հատ. Գ, Երեւան, 1984, էջ 161:

4 Անդ:

5 **Վարդան Բարձրբերդցի**, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 181-182:

6 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Երեւան,1961, էջ 166:

Ժամանակի հայ պատմիչների վկայությամբ, ինչպես արդեն վերեւում հիշատակեցինք, Իվանեն քաղկեդոնականություն էր ընդունել, իսկ Զաքարեն մնացել էր Հայ Եկեղեցուն հավատարիմ: Իվանե իշխանի դավանափոխության մասին մի քանի այլ մանրամասնություններ է հաղորդում ԺԳ. դարի վրաց անհայտ մի հեղինակ, ըստ որի, մի օր, երբ պատարագում էր վրաց Իվանե Կաթողիկոսը, Զաքարե իշխանը ցանկանում է Ս. Հաղորդություն վերցնել, սակայն մերժվում է վրաց քահանաների կողմից, քանի որ դավանանքով հայ էր: Եւ այդ ժամանակ Վրաց Կաթողիկոսն սկսում է պախարակել Հայոց Եկեղեցու դավանանքը. «ուղղափառներից վոչ ոք թույլ չի տա քահանայագործության [ժամանակ] տալ նշխար ձեզ, յոթն անգամ նզովյալ հայերին. Իսկ շունը որ գտնի, լայեղ էլ չի անի ձեզանից փախցնի»[7]: Զաքարեն փորձում է նրան ապացուցել հայրենի հավատի ճշմարտացիությունը, բայց տեսնելով, որ ի զորու չէ, ասում է. «Կդիմեմ մեր դավանության (հավատքի) վարդապետներին, որոնք իմ փոխարեն կամաչեցնեն ձեզ»: Նա մարդ է ուղարկում Հայոց Կաթողիկոսի եւ նշանավոր վարդապետների մոտ, եւ այդտեղ են գալիս Վանի (Աղթամար) Կաթողիկոսը, եպիսկոպոսներ, վարդապետներ, եւ սկսվում է բանավեճը, որն այնքան է սրվում, որ Իվանե Վրաց Կաթողիկոսն առաջարկում է ստուգել, թե ում սրբագործած նշխարն է վերածվում Քրիստոսի ճշմարիտ Մարմնի: Երկու կողմերն էլ երեք օր մեկական շան անոթի են պահում, ապա սրբագործած Հացը գցում դրանց առաջ: Սոված շունն ուտում է հայերի նշխարը, եւ վերջիններս պարտություն են կրում: Տեսնելով այս ամենը՝ Իվանեն ասում է եղբորը՝ Զաքարեին. «Չուզեցի ընդդիմախոսել վրացիներին, քանի որ ճշմարիտ հավատի տեր եմ: Այժմ ինչը պետք է ինձ լինի խոչընդոտ (կանգնեցնի), վոր ես չընդունեմ ճշմարիտ հավատն ու չմկրտվեմ վրաց կաթողիկոսից»[8]: Իվանեն եւ նրա հետ բազում հայեր վրացական մկրտություն են ընդունում: Վրաց անանուն այս պատմիչի[9] հաղորդման պատմագիտական փաստարկ լինելն ստուգելու համար ոչինչ չունենք, միայն ակնհայտ է, որ հեղինակը դիմել է չափազանցությունների:

Այսուհանդերձ, այն, որ, պատմիչների համաձայն, Իվանե Զաքարյանը դավանափոխ է եղել, հավաստի է, եւ այդ են վկայում նրա կողմից Հայաստանում կառուցված կամ վերածված քաղկեդոնական վանքերը (Ախթալա, Մեղրաձորի Պղնձավանք, Քոբայր), սակայն հարկ է անդրադառնալ, թե ինչ հանգամանքներում նա դավանափոխ եղավ: Դժբախտաբար այսօր մեր ձեռքի տակ ավելի շատ են վրաց կողմի սկզբնաղբյուրները, ովքեր, դուրս գալով ժամանակի քաղաքական համատեքստից, նույնիսկ հանգում են պատմականորեն ոչ ճշգրիտ հետեւությունների. «Իվանեն, ինչպես երեւում է հայկական աղբյուրներից, դարձավ հետեւողական քաղկեդոնական եւ շուտով բուն հայկական հավատի ու եկեղեցու դեմ բացահայտ պայքարի մեջ մտավ»[10]: Իվանե Զաքարյանը երբեք Հայ Եկեղեցուն հակառակ գործունեություն չի ծավալել, ավելին, նա էր, որ Մխիթար Գոշին տարածք էր տրամադրել Նոր Գետիկի վանքը կառուցելու համար, նա էր, որ ինչպես կտեսնենք, երբ Զաքարեն ձերբակալել էր հայ վարդապետներին, ազատ էր արձակել եւ այսպես շարունակ: Իվանե

7 **Լ. Մելիքսեթ-բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հատ. Բ, Երեւան, 1936, էջ 19:

8 Անդ:

9 Այս պատմությունը՝ «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», հայերեն է թարգմանել Խ. Թորոսյանը եւ զետեղել իր «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր» գրքում (Երեւան, 1992):

10 Սույն կարծիքն արտահայտել են վրաց հեղինակներ Ծ. Մեսխիան եւ Վ. Գոչուան (տե՛ս Խ. Թորոսյան, էջ 243):

Զաքարյանի դավանափոխության հարցն ըստ Խ. Թորոսյանի պայմանավորված էր վրաց Թ-ամար թագուհու հետ ավելի նեղ, անձնական հարաբերություններով. «Ակնհայտ է, որ այն անտարբեր, կրավորական չէ: Նա (Թ-ամարը-Լ. Ե.) միայն հրապուրանքի առարկա չէ, այլեւ հրապուրող է, որովհետեւ Իվանեն «խաբեալ է» նրանից»[11]: Սակայն մեր կարծիքով Զաքարյան եղբայրների դավանական հարցն ավելի քաղաքական բնույթ էր կրում, քան թե կրոնական, որովհետեւ Զաքարեն եւս, համարվելով հայադավան, ամուր կառչած չէր հայ դավանանքին, քանի որ խոստովանահայր Մխիթար Գոշը մտավախություն ուներ նրա դավանափոխության հարցում: Գալով Խ. Թորոսյանին, ասենք, որ Թ-ամար թագուհու հետ անձնական կապերը հնարավոր է, որ նույնպես Իվանեի քաղաքական ծրագրերից լինեին:

Անդրադառնալով Զաքարյան իշխաններից ավագ եղբորը՝ Զաքարեին, ասենք, որ, ինչպես վերը նշեցինք, մնալով Հայ Եկեղեցու հավատարիմ զավակ, այնուհանդերձ, ցանկանում էր մի քանի խնդիր լուծել՝ կապված Հայ Եկեղեցու ծիսական առանձնահատկությունների հետ[12]: Դրա համար առիթ էր դարձել բանակում շարժական Ս. Սեղան ունենալու խնդիրը: Բանն այն էր, որ հայ-վրացական միացյալ զորագնդերում վրացիներն ունեին շարժական Սեղան եւ պատարագամատույց քահանաներ, ինչի շնորհիվ էլ ռազմական արշավանքների ժամանակ հնարավոր էր լինում նշել եկեղեցական տոները եւ հաղորդվել, մինչդեռ ինքը՝ Զաքարեն «ոչ ունէր...եւ յոյժ ցաւ էր նմա»[13]: Այս հարցով նա դիմում է Մխիթար Գոշ վարդապետին: Վերջինս պատասխանում է, որ հայերը եւս նախկինում ունեցել են նման սովորություն, ինչպես օրինակ Տրդատ Մեծի կամ Վարդանանց պատերազմի ժամանակ: Ոմանց կարծիքով Հայ Եկեղեցում շարժական Ս. Սեղան գործածելու ավանդությունը գործել է մինչեւ ԺԱ. դար. «Էր յառաջագոյն եւ յազգս մեր այն սովորութիւն ի բացօթեայս պատարագել, այլ յետ Բագրատունեաց այն անհետացեալ»[14]: Թե ինչ պարագաներում այս ավանդությունը մոռացության տրվեց, մեզ հայտնի չէ: Մխիթար Գոշը նաեւ ասում է, որ շարժական Ս. Սեղան օգտագործելու համար Զաքարեն պետք է դիմի Հայոց Կաթողիկոսին եւ նրանից թույլտվություն ստանա. «Մեք ոչ կարեմք առնել զայդ առանց հրամանի Կաթողիկոսին Հայոց եւ թագաւորին Լեւոնի»[15]: Զաքարե իշխանը շուտով նամակով դիմում է Հովհաննես Զ. Սսեցի Կաթողիկոսին (1203-1221), եւ Լեւոն II թագավորին (1187-1219)[16]: 1203 թվականին Լեւոն թագավորը Սսում ժողով է գումարում՝ Դավիթ Արքակաղնեցու գլխավորությամբ եւ ներկայությամբ կիլիկյան եպիսկոպոսների ու նշանավոր վարդապետների: Ժողովականները Զաքարեի առաջարկները, որոնք թեեւ մեզ հայտնի չեն, բայց դրանց մասին տեղեկություն ենք ստանում ժողովի որոշումներից, համարում են «համաձայն առաքելա-

11 Անդ, էջ 242:

12 Իրոք այս շրջանում Հայ Եկեղեցում առկա էին ծիսական որոշ շեղումներ, որոնք ժամանակի ընթացքում, այլեւայլ ճանապարհներով սպրդել էին եկեղեցի, եւ առիթ էին հանդիսանում, երբեմն արդարացի, բայց ավելի հաճախ՝ չափազանցված եւ անհիմն մեղադրանքների Հույն եւ Վրաց եկեղեցիների կողմից:

13 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 166-167:

14 **Արել արքեպիսկոպոս Մխիթարյանց**, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 261 (տե՛ս նաեւ՝ **Արէլ վրդ. Մխիթարէանց**, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, էջ 118):

15 **Կիրակոս Գանձակեցի**, էջ168:

16 Այս ժամանակ Հովհաննես Զ. Կաթողիկոսը հակասության մեջ էր Լեւոն II թագավորի հետ, վերջինս կաթողիկոսական գահ էր բարձրացրել Դավիթ Արքակաղնեցուն, որը եւ վարում էր բոլոր գործերը: Սրա մասին տեղեկություն չուներ Զաքարեն, ինչի պատճառով դիմումը ուղղում է Հովհաննես Զ-ին:

կան կանոնաց, եւ ոչ արտաքոյ»[17]: Ժողովականներն ութ կանոն են սահմանում եւ ուղարկում Զաքարեին.

1. Սուրբ Պատարագ մատուցել դպիրներով ու սարկավագներով[18]:

2. Սուրբ Աստվածածնի Ավետումը տոնել ապրիլի 6-ին, Վերափոխումը՝ օգոստոսի 15-ին, Խաչվերացը՝ սեպտեմբերի 16-ին, եւ նմանապես բոլոր սբերի հիշատակները տոնել այն օրը, որին որ հանդիպեն:

3. Ճրագալույցներին պահքը շարունակել պահել մինչեւ ցերեկ եւ չլուծել:

4. Ընդունել Տիրոջ եւ սուրբերի պատկերները[19]:

5. Սուրբ Պատարագ մատուցել ոչ միայն ննջեցյալների, այլ նաեւ ողջերի համար[20]:

6. Վանականներին արգելել միս ուտել:

7. Ձեռնադրությունները կատարել ըստ նվիրապետական աստիճանների հերթականության՝ դպիր, սարկավագ, քահանա եւ այլն:

8. Վանքերում միաբանությամբ ապրել եւ չունենալ անձնական սեփականություն:

Այս ժողովի կանոններն ընդունելիս, ժողովականները մտահոգ էին, որ Զաքարեն էլ Իվանեի նման չընդունի քաղկեդոնականություն. «այդ ժողովը ոչ թէ սահմանուած էր եկեղեցւոյ համար, այլ Զաքարէի պահանջմանն օրինաւորութիւն տալու համար»[21]: Իսկ մյուս կողմից Լեւոն II-ի համար սա հարմար առիթ էր իր նախաձեռնությամբ կաթողիկոսական գահ բարձրացած Դավթին համահայկական ճանաչում տալու առումով:

Ժողովի որոշումների հետ Հովհաննես կաթողիկոսը Զաքարեին է ուղարկում. «...վրան մի գմբեթարդ եկեղեցաձեւ եւ կազմողս եւ յորինողս նմին, եւ սեղան մարմարեայ, եւ այլ սպաս պատարագաց, եւ եպիսկոպոս մի, Մինաս անուն, եւ սարկաւագս եւ դպիրս, եւ քահանայս գեղեցկաձայնս, ասացողս պատարագին»[22]: Հովհաննես Զ-ն սրանով փորձում էր ցույց տալ, որ ինքն էր իրական գահակալը:

Զաքարեն, տեղի վարդապետների համաձայնությունն ստանալու համար, 1205 թվականին ժողով է գումարում Լոռիում, որին մասնակցում են Գրիգոր Տուտեորդի, Անիի Սարգիս, Բջնիի Վրթանես, Կարսի Հովհաննես եպիսկոպոսները, Մխիթար Գոշը, Դավիթ Քոբայրեցին, Խաչատուր Տարոնացին եւ ուրիշներ: Զաքարեն կամենում էր, որ Հովհաննես Կաթողիկոսի նվիրած շարժական Սեղանին Ս. Պատարագ մատուցվեր եւ ներկաները, ի նշան համաձայնության, հաղորդվեին, բայց որովհետեւ, Սսի ժողովի որոշումները բուռն

17 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 169:

18 Ըստ Մ. Օրմանյանի հենց այս կետում է խոսվում շարժական սուրբ Սեղանի մասին (տե՛ս **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, հատ. Ա, Ս. Էջմիածին, էջ 1840-1841):

19 Հայտնի է, որ վրացիները հայերի հետ սրբապատկերների խնդրի կապակցությամբ «սկսում են կռծանել հայկական եկեղեցիների ավագ խորանների խաչերը, քանի որ իրենց մոտ խաչի փոխարեն սրբապատկերներ էին դրվում Ս. Սեղանների վրա» (**Եզնիկ վրդ. Պետրոսյան**, Հայոց եկեղեցու պատմություն, Ս. Էջմիածին, 1995, էջ 150):

20 Ըստ Մ. Օրմանյանի «Այդ խնդիրը լոկ թիւրիմացութեան հետեւանք մը եղած պիտի ըլլայ, վասնզի կենդանեաց օգտին մատուցանել երբէք արգելք չէ դրուած» («Ազգապատում», էջ 1841-1842), սակայն Մխիթար Գոշն ասում է, որ իրողությունը համաեկեղեցական բնույթ է կրել. «Այլ զի պատճառ եղեւ ծուլութեան եւ յանախելոյ ի հեշտութիւն» (**Մխիթար Գոշ**, էջ 370):

21 **Յուսիկ վրդ. Մովսիսեան**,Հայաստանեայցս Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն, Ս. Էջմիածին, 2008, էջ 230:

22 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 170:

ընդդիմության հանդիպեցին արեւելյան որոշ վարդապետների կողմից՝ գլխավորությամբ իր քեռորդու՝ Հաղպատի վանահայր Գրիգոր Տուրեռորդու եւ Դավիթ Քոբայրեցու, այն տեղի չունեցավ: Պատարագին չմասնակցելու համար ընդդիմադիրները գիշերով փախուստի դիմեցին, Զաքարեն ոմանց եւ կանչելով, բռնի կերպով անցկացնում է Ս. Պատարագը՝ գլխավորությամբ Կիլիկիայի Մինաս եպիսկոպոսի:

Այսպիսով, ժողովականները բաժանվում են երկու խմբի. «ոմանք հաւանեցան այնց՝ մանաւանդ Խաչատուր եւ Մխիթար վարդապետք. այլ որոց գրան անհաւան, գլխաւորք էին Տուրէորդին Գրիգոր, Դաւիթ Քոբարեցի, Յովհաննէս Սանահինի եւ այլ բազումք. որովք եւ երկպառակեալք քակտեցան ի միմեանց»[23]: Սրանից հետո Զաքարեն դիմում է բռնությունների՝ ստիպելով գործածել ժողովական որոշումները. «Բազում անմիաբանութիւնք եւ կռիւք էին յեկեղեցիս, եւ լինէր փոխանակ ուրախութեան տրտմութիւն, եւ փոխանակ սիրոյ ընդ միմեանս՝ ատելութիւն, մինչեւ ի սուր եւս մտրաերել միմեանց»[24]: Զաքարեն Սսի ժողովի կանոնները գործադրելու համար Հաղպատ է ուղարկում Մինաս եպիսկոպոսին իր պաշտոնյաներով, սակայն Տուրեռորդին մարդիկ է հանում նրանց դեմ, ովքեր «հուպ ի վանքն ... սաստիւ հարին զնա [Մինաս եպիսկոպոսին-Լ.Ե.] բրօք, եւ թողին կիսամահ»[25]: Բնական է, որ սպասքը նույնպես ոչնչացվեց: Այս դեպքից հետո Տուրեռորդին փախչում է Գետիկի վանք՝ Մխիթար Գոշի մոտ պաշտպանություն գտնելու, իսկ ավելի ուշ, երբ Կեչառիսի վանքում էր, Զաքարեն բռնում է նրան, զրկում պաշտոնից ու բանտարկում:

Քանի որ այլեւս չկար ամենաուժեղ ընդդիմադիրը, Զաքարեն հաջողության հասնելու հույսով 1207 թվականին Անիում ժողով է գումարում: Մխիթար Գոշը չի ցանկանում մասնակցել այս ժողովին՝ հիվանդությունը պատճառաբանելով, բայց ժողովականներն ասում են. «Զանկարութիւն մարմնոյ մի՛ ինչ պատճառեր. եթէ ճանապարհի հասանէ քեզ վախճան, ընդ առաջին սուրբ վարդապետացն եկեղեցւոյ կարգեսցուք զհիշատակս քո»[26]: Ի վերջո Մխիթար Գոշը ներկայանում է ժողովին եւ «Զաքարիա ստիպեաց զվարդապետս ժողովոյն ընդունել զկանոնս»[27]: Գոշը ժողովական հոգեւորականներին «խորհուրդ տվեց իրենց տեղերը ցրուել եւ հոգ տանել, որ հայ ժողովուրդը վրաց հետ չխառնուի. ինքն էլ խոստացաւ Զաքարիայի սիրտը մեղմել եւ հոգալ, որ նա էլ Իւանէ եղբօր նման վրացի չդառնայ»[28]: Դրանից հետո, սակայն, Զաքարեն, Գոշից ծածուկ, ընդդիմադիրներին աքսորում է, բայց երբ վերջինս իմանում է՝ «զբազումս ի նոցանէ թափեաց դառնալ ի տեղիս իւրեանց, եւ զայլսն յետ սակաւ ինչ աւուրս Իւանէ եղբայր զօրավարին հրաման եւ դառնալ ի տեղիս իւրեանց»[29]:

Այսպիսով, հարցը մնում է առկախյալ, եւ տարաձայնությունները շարունակվում են մինչեւ Զաքարե ամիրպասալարի մահը (+1212). «Իսկ Զաքարէ զժամանակս կենաց իւրոց որչափ եկաց՝ նոյնպէս վարեցաւ, բայց եկեղեցիքն ամենայն առաջին պաշտամամբք վարեցան»[30]: Վերջին տողերից նկատվում է, որ այս ժողովների կանոնները լայն տարածում չեն

23 Անդ:
24 Անդ, էջ 164:
25 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 164:
26 Անդ, էջ 175:
27 **Արել արքեպիսկոպոս**, էջ 263:
28 **Ա. Զամինեան**, Հայոց եկեղեցու պատմութիւն, Նոր-Նախիջեւան, 1908, էջ 241:
29 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 177:
30 Անդ, էջ 177-178:

գտել Հայաստանում, այլ գործածվում էին անհատական նախընտրությամբ: Ժողովի կանոնները համաեկեղեցական ճանաչում չգտան մանավանդ այն պատճառով, որ արդեն իսկ Սիսում դրանց ընդունումը, ինչպես արդեն նշեցինք, գիջողական բնույթ էր կրում: Եւ բացի այդ, դրանք Հայաստանում ուղղակի պարտադրվեցին Զաքարեի կողմից. «Զաքարէի հալածասիրական վարմունքն դատապարտելի է պատմութեան անաչառ դատաստանին առջեւ: Վասն զի, իշխանական սասր եւ սպառնալիք ի գործ դնել այն տեղ, ուր միայն խորհուրդ եւ համոզումն կը պահանջուի, այս կը նշանակէ սիրոյ տեղ՝ սուր շողացնել, որ պատերազմական գործի է եւ ոչ եկեղեցական ժողովի»[31]: Սակայն հարկ է նշել, որ Զաքարեն ցանկանում էր բարեկամական կապերը պահպանել վրացական թագավորության հետ, իսկ այս խնդիրներն ուղղակի խոչընդոտ էին, եւ չենք կարող ենթադրել, թե հայ-վրաց կրոնական բախումներն այդ, արդեն իսկ ծանր պայմաններում, ինչ ավարտ կունենային: Մյուս կողմից՝ ժողովի կանոններն այնքան էլ հակադավանական չէին, իսկ Տուրեռդին ու իր կողմնակիցները հաճախ չափազանց պահպանողական եւ կուրության հասնող մոլեռանդություն էին ցուցաբերում այն ասպիճան, որ չէին ցանկանում ընդունել նույնիսկ տրամաբանական եւ տարրական բաներ, որոնք խորթ չէին Հայ Եկեղեցու ծիսական ավանդույթներին եւ խաթարվել էին դարերի ընթացքում, ինչպիսիք էին, օրինակ Ս. Պատարագը փակ դռներով չմատուցելը. այս սովորությունն առաջացել էր արաբական տիրապետության շրջանում, որպեսզի արաբները հանկարծակի ներս խուժելով չխանգարեին Սրբազան արարողությունը: Պետք է հիշել նաեւ, որ այս շրջանում էր, որ Կիլիկյան Հայաստանում առաջ էին եկել լատինների հետ Հայ Եկեղեցու միավորման խնդիրները, եւ այս նույն արեւելյան վարդապետներն էին, որ մեծ պայքար ձեռնարկեցին, ու այս էր պատճառը, որ վերջիններս ավելի պահպանողական դիրք էին բռնում:

Զաքարեի այս առաջարկները, եւ ընդհանրապես, վրաց կողմի մեղադրանքները հայերին ստիպեցին շտկել ժամանակի ընթացքում Հայ Եկեղեցու ծիսակարգ մտած այնպիսի խախտումներ, ինչպիսիք էին Ավետման տոնի շարժականությունը, սրբալույս Մյուռոնի՝ առանց բուրումնավետ նյութերի պատրաստումը, ողջերի համար Պատարագ չմատուցելը, վանական կյանքում առկա անկարգություններ եւ այլն: Ակներեւ է նաեւ Ս. Սեղանի վրա պատկեր ունենալու հայոց՝ գրեթե պարտադիր դարձած ավանդույթի հարցում Վրաց Եկեղեցու պատկերահարգ մոտեցման ազդեցությունը:

31 **Մ. վրդ. Մուրատեանց,** Պատմութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1872, էջ 465: